

ՀՈՒՍԿ ԱՊԱ

Փետրուար 27-էն 1 Մարտ 1, Լոս Անճըլըսի USC համալսարանին մէջ տեղի ունեցաւ «Լեզուն Սփիւռքով մէկ, հայերէնը իր հեռանկարներով» գիտաժողովը, որուն եզրափակիչ խօսքը արտասանեց Գալուստ Կիւլպէնկեան հիմնարկութեան Հայկական բաժանմունքի արեւմտահայերէն լեզուի զարգացման եւ դպրոցներու օժանդակութեան պատասխանատու Աճի Կարմիրեան: «Նոր Յառաջ»-ի թիւ 2268-ին (2026 Մարտ 12) մէջ զեկոյցով մը անդրադարձած էինք եօթնապիսի գիտաժողովի գլխաւոր նիւթերուն: Տեղի սղութեան պատճառով կարելի չէր եղած անդրադառնալ կարգ մը բանախօսներու արտայայտած կարեւոր մտքերուն: Ստորեւ կը հրատարակենք գիտաժողովին՝ Աճի Կարմիրեանի եզրափակիչ խօսքը:



Սեպտեմբեր 2015-ին Գալուստ Կիւլպէնկեան Հիմնարկութիւնը Ինսթիտուտի հետ համագործակցութեամբ Փարիզի մէջ գիտաժողով մը կազմակերպած էր «Դաստիարակչական նորարարութիւններ՝ 21-րդ դարուն արեւմտահայերէնի դասաւանդման մարտահրաւէրները» վերնագրով:

Այդ առաջին գիտաժողովը մեր աշխատանքներուն մեկնակէտը հանդիսացաւ: Տասը տարի ետ երթալով կը տեսնենք թէ մեր ուշադրութիւնը հեռացաւ լեզուի «կորուստ»-ի մտասեւեռումէն եւ ուղղուեցաւ դէպի Սփիւռքի մէջ լեզուական կենսունակութիւնը հրահրելու հրամայականը, չմոռնալով երբեք որ մեր երիտասարդութիւնը կ'ապրի բազմալեզու իրականութեան մը մէջ: Այդ իրականութիւնն է, որ նկատի առնել պէտք էր, որպէսզի մեր լեզուն իրապէս ընդունէր, ստանձնէր եւ զարգացնէր ինքզինք որպէս սփիւռքեան լեզու: 2015-ի գիտաժողովը ամրացուց նաեւ այն էական գաղափարը որ յաջողութեան բանալին մեր համագործակցութեան թափին մէջն է, եւ ոչ թէ անհատական ջանքերուն մէջ: 2015-էն ետք, երկու հաւաքույթ եւս (առաջինը 2016-ին՝ Փորթլոկալ, երկրորդը՝ յաջորդ տարին, Ֆրանսա) ճամբայ հանեցին բազմադիմի գործունէութիւն մը. նորարար մանկավարժական գործիքներ արտադրել, զանոնք համադրող հարթակ մը ստեղծել, ուսուցիչներու եւ դպրոցներու հետ կանոնաւոր վերապատրաստական հանդիպումներ կազմակերպել, նաեւ՝ տնօրէններու մակարդակին համագումարներ: Նոյն տարիներուն՝ Զարմանազանը ստեղծուեցաւ, վայր մը ուր պատանիներ եւ երիտասարդներ լեզուին մէջ ներսուզուելով՝ զայն կ'ապրին ու կ'ապրեցնեն: Անահիտ Սարգիսեանի եւ Նրդիքի լատեստողական նիւթերը առցանց հասանելի դարձան դասարաններէ եւ տուններէ ներս: Հայալեզու Առցանց Միջազգային ԻՄԱՍ ծրագիրը ստեղծուեցաւ: UCLA-ի հայագիտականի ամպիոնը հայախօս գիտնականներու սերունդներ պատրաստեց, որոնք այսօր գործի գլուխ են: Թեքնաբանական աշխարհը հսկայ քայլերով յառաջ գնաց:

Այս 10 տարիներուն ի՞նչ սորվեցանք մեր յաջողութիւններէն: Յաջողութեան հասնելու համար սկիզբը կայ տեսլական մը, որ կ'ապահովէ կայուն ծրագիր մը, որ միեւնոյն ժամանակ մարդուժ կը պատրաստէ, ոչ միայն տեղական, նաեւ սփիւռքեան: Կը ստեղծուին կորիզներ, սփիւռքեան ցանցեր, իրարու միջեւ կապեր հաստատող, տեղ-տեղ միացող եւ զիրար զարգացնող, աճող... կը հիւսուին անոնք օղակ-օղակ: Այս ամբողջը ընթացք է, ժամանակի կը կարօտի: Յարատեւութիւն եւ համբերութիւն կը պահանջէ: Լեզուին մէջ ներսուզուելու, լեզուով ապրելու փորձառութիւնը հայերէնի պարագային իր յաջողութիւնը կը պարտի ծրագրերու եւ դպրոցներու, որոնք երկարատեւ ժամկէտով կը կիրարկեն նոյն սկզբունքները:

Այս 10 տարիներուն ընթացքին, գիտակից, դրական, աշխուժ, մէկէ աւելի սերունդներու կենսունակ գոյակցութիւնը շատ զգալի եղաւ: Այսօր աւելի քան երբեք Սփիւռքը կը գործադրէ ժամանակակից չափանիշներ, դարուն հետ միասին կը զարգանայ, նախապատուութիւնը կու տայ երեխային եւ մեծ կամ պզտիկ՝ լեզու իւրացնողի ապրումներուն, լեզուն կը նկատէ իբրեւ միջոց աշխարհին բացուելու, եւ ոչ իբրեւ նպատակ: Ստեղծողական զարգացման, արհեստական բանականութեան, անդրլեզուութեան եւ այլ մարզերէ ներս դարուս բանալիները հայերէնին կիրարկելու մարտահրաւէրները յաջողութեամբ կը դիմագրաւէ:

Եւ այսօր, առաջին գիտաժողովէն 10 տարի յետոյ ահաւասիկ կը գտնուինք Լոս Անճըլըս՝ Հարաւային Գալիֆորնիոյ համալսարանը:

Տասնմէկ երկիրներէ ժամանեցինք եւ երեք շատ հարուստ օրեր անցուցինք, «Լեզուն Սփիւռքով մէկ՝ հայերէնը իր հեռանկարներով» նիւթին շուրջ միասնաբար մտորելով: Նշեցինք մեր առաջին հանդիպումին տասնամեակը, ու կատարեցինք իրավիճակին քննարկումը, 21-րդ դարու

առաջին քառորդի ակարտին:

Բոլորիս մտահոգութիւնն էր կարծեմ՝ բազմալեզուական զարգացումը պետութենէ զուրկ պայմաններու մէջ: Եւ ուրեմն գործ ունեցանք «Ժառանգական» լեզուներու հետ, ըլլա՛յ բնիկ, ըլլա՛յ գաղթական բնակչութիւններու պարագային:

Բայց Սփիւռքը, շորս սերունդ վերջ, այլեւ միայն գաղթականներէ չէ բաղկացած: Ուրեմն բնիկն է գաղթականէն զատ՝ ունինք «սփիւռքեան լեզուն»: Ահաւասիկ նոր ստորագութիւն մը, նոր categorie մը՝ «langue diasporique»: Բնիկ, գաղթական, սփիւռքեան:

Երկլեզուութեան կամ նոյնիսկ բազմալեզուութեան ընդհանուր երեւոյթէն անդին՝ նուրբ տարբերութիւններ կան ասոնց միջեւ, ո՛չ թէ միայն սահմանումի, այլեւ՝ զարգացումի առումով: Օգտուիլ պէտք էր ամէն մէկուն պարագային՝ արդէն իսկ կատարուած հետազոտութիւններէն, զանազան մարզերու մէջ: Ու մանաւանդ՝ երկխօսութիւն մը ստեղծել պէտք էր ասոնց միջեւ՝ բնիկին, գաղթականին, եւ սփիւռքեանին միջեւ: Կը յուսանք որ մեր հանդիպումը զգալի դարձուց բոլորին այդ երկխօսութեան անհրաժեշտութիւնը, եւ բեղմնաւորութիւնը:

Բնիկ լեզուներու եւ գաղթական լեզուներու կողքին, ահաւասիկ ուրեմն երրորդ ձեւ մը պետութենէ զուրկ լեզուները դիտելու, եւ ուրեմն երրորդ ձեւ մը այդ լեզուներու զարգացումին մասին մտածելու, այդ զարգացումը իրականութիւն դարձնելու, լեզուներու կենդանութեան հին ու նոր եղանակները վերաքննելու:

Գործ ունինք սփիւռքեան լեզուի մը հետ, որ կը խօսուի, կը փոխանցուի երեք թէ չորս ցամաքամասերու վրայ, ինքնիշխան եւ ինքնավար կերպով: Վահէ Օշականը չէ՛ր ըսողը որ Սփիւռքը պէտք է հռչակէ իր անկախութիւնը (1): Կ'ուզէր ըսել ի միջի այլոց անշուշտ՝ պէտք է ձեռք ձգէ իր լեզուական եւ մշակութային ինքնավարութիւնը, առանց կախեալ ըլլալու պետութենէ մը:

Մեր գիտաժողովին վերնագիրն էր՝ «Լեզուն Սփիւռքով մէկ»: Այդ խօսքը կարծեմ՝ կ'արժէ բազմալեզուութեան միւս ճիւղաւորումներուն համար ալ: Բայց մասնայատուկ գրաւական մը կայ «սփիւռքեան»-ի պարագային: Եւ մինչեւ իսկ տարբեր մակարդակներու վրայ գրաւականներ, որոնց գիտակցումը շահեկան է բոլոր պարագաներուն համար:

Սփիւռքեան լեզուն ինքն իր հետ հաղորդակցութեան մէջ է, մէկ ցամաքամասէն միւսը, այո՛: Կենդանութեան իր ձեւերը զարգացուցած է, այո՛: Բայց պէտք ունի աւելիին: Կ'ուզէ տեսանելի ըլլալ: Կ'ուզէ նաեւ տեսնել թէ պետութենէ զուրկ միւս ճիւղաւորումները ի՞նչ կ'ընեն: Իւրացումի ի՞նչ տեսակ եղանակներ կ'որդեգրեն: Ներսուզման մօտեցումներ որդեգրելով: Շեշտը գրագիտութեան վրայ դնելով: Անդրլեզուական մեթոտներ կիրարկելով: Խաղալով: Թատրոնով: Ինչպէ՛ս կը պատրաստուի մտաւորական խաւ մը պետութենէ զուրկ այդ երեք ճիւղաւորումներու՝ սահմաններէն ներս: Կենսունակութիւնը ինչպէ՛ս կ'արձարձուի, արուեստով, թուայնացման նոր միջոցներով: Համալսարանական ծրագրերով: Եւ ահա՛ ուրիշ հարցումներ. կա՞ն ուսուցիչ պատրաստելու միտում հաստատութիւններ, կա՞յ լրագրութիւն, կա՞ն հրատարակչական նախաձեռնութիւններ, կա՞ն լեզուին եւ օրինակ՝ գրագիտութեան պատմութիւնը ծայրէն գրելու փորձեր: Կա՞ն մանկական պարբերականներ:

Հարցումներու այս շարքով փորձեցի հաւաքել բոլոր նիւթերը որոնց մասին խօսուեցաւ այս երեք օրերուն ընթացքին: Գիտակցելով որ միշտ երկու ուղղութեամբ պէտք է լսել այդ հարցումները: Սփիւռքեան լեզուին եւ միւս՝ գաղթական կամ բնիկ լեզուներուն միջեւ անհրաժեշտ երկխօսութիւնը միշտ ի մտի ունենալով ունենալով: Այնպէս որ բոլորս պիտի կարենանք օգտուիլ հոս ըսուածներէն:

(1) Տէ՛ս. օրինակ՝ «Փորձ Սփիւռքի տեսութեան» յօդուածը, լոյս տեսած Լոս Անճըլըսի Ասպարեզ օրաթերթին մէջ, 1987 Յուլիս 3-ի եւ 11-ի թիւերուն մէջ: Վերատպուած ԱԱՄ հանգէսին մէջ, թիւ 10: Նախազատութիւնը հետեւեալն է՝ «Սփիւռքի անկախութիւն հռչակելը երթալով աւելի անհրաժեշտ կը դառնայ»:



Պահ մը եւս կեդրոնանալով սակայն հայերէնի պարագային վրայ՝ կասկած չկայ որ անհատական, ակադեմական, գիտական մակարդակի՝ լեզուական եւ մանկավարժական յառաջդիմութիւնը անժխտելի է:

Կորիզներ կը ծնին, ծրագրեր կը ծագին, Սփիւռքով մէկ: Ընդունինք սակայն որ տակաւին շատ բան ունինք ընելիք:

Մասնաւորաբար՝ լեզուն պահել գաղափարապաշտ եւ բարոյական շահանիշերէ հեռու, պահպանողական կաղապարներէ դուրս:

Պտուղները պիտի քաղենք հոս ըստածներուն, պիտի արդիւնաւորենք այս երեք օրերու մեր միասնական անգնահատելի աշխատանքը:

Ահա՛ ինչու սրտանց շնորհակալ ենք ձեր բոլորին, շնորհակալ ենք ձեր բերած հսկայ ներդրումին համար:

Հիմա կ'ուզեմ որ այս փակման խօսքս հնչէ ուրիշ ձեւով, ներքող մը ուղղելով լեզուին: Լեզուին ընդհանրապէս, բազմալեզուութեան երեք եղանակներով՝ բնիկ, գաղթական եւ սփիւռքեան:

Լեզուն (2)

Լեզուն ճկուն է
հով հոսանք
շարժում
օրէնքներով խաղալ
կը սիրէ լեզուն
ամէն օրէնքի
բացատրութիւն կը սիրէ

Լեզուն ձայն է
աղմուկ
փոթորիկ
կայծակ
որոտում
կը սիրէ լեզուն
խաղաղութիւն
լուծիւն
երաժշտութիւն կը սիրէ

Լեզուն ընկեր է
վայր
միջավայր
տուն տեղ
մտերմութիւն կը սիրէ լեզուն
խօսակցութիւն
վիճաբանութիւն
բարեկամութիւն
տրամադրութիւն
հաղորդակցութիւն կը սիրէ

Լեզուն ինքնիշխան է
անհատականութիւն
ազատութիւն
ըմբոստութիւն կը սիրէ լեզուն,
տրամաբանութիւն
անտրամաբանութիւն կը սիրէ

Լեզուն ոճ է
բնական
անմիջական
մտերմիկ ըլլալ կը սիրէ
խօսակցական
գրական
բանաստեղծական
իրաւաբանական
քաղաքական
ուամիկ շեշտեր կը սիրէ

Լեզուն գանձ է
հարստութիւն
ճոխութիւն
զարգացում
բարգաւաճում
կը սիրէ լեզուն
դէպի ապագայ ծաւալիլ
արժեւորուիլ կը սիրէ

Լեզուն գոյն է
մանկական

ընտանեկան
թաղային
ակումբային
խմբային
բարբառային
ակունքներ կը սիրէ լեզուն
զանազան
տարբեր
անսովոր
երանգներ կը սիրէ

Լեզուն դիմակ է
ծպտուիլ
պահուելու կը սիրէ
կապկել
նմանիլ
տարբերիլ
նորոգուիլ
փոխուիլ
կերպարանափոխուիլ
կը սիրէ լեզուն
կերպարանափոխուելով
զարգանալ
հարստանալ կը սիրէ

Լեզուն շունչ է
խօսիլ
պատմել
սիրել
սիրահարիլ
ապրիլ կը սիրէ
խումբի մը
սերունդի մը
պատկանիլ կը սիրէ

...

Լեզուն Սփիւռքով մէկ

Ապրիլ, մտածել, երեւակայել, երազել, խաղալ, սիրել, նախանձիլ, մշակել, զարգացնել...

Լեզուն Սփիւռքով մէկ

Լեզուով զարգանալ կ'ուզէ, զարգացնելու համար լեզուն:
Զարգանալ կ'ուզէ լեզուով մը, միւս լեզուներուն հասնելու համար:
Զարգանալ կ'ուզէ լեզուն, մտածելու, մտածող լեզու դառնալու համար:
Զարգանալ կ'ուզէ լեզուն, Սփիւռքով մէկ միանալու համար:
Զարգանալ կ'ուզէ, միւս տարբերակը յարգելու համար, անոր հետ լեզու գտնելու, հարազատ դառնալու, հաճոյք առնել կարենալու համար:

Լեզուն Սփիւռքով մէկ

Այսօր Սփիւռքի մէջ ծնած մեծցած երիտասարդ սերունդներ կան, որոնք գիտակցօրէն, ընտրովի, համայնքներէն հեռու կորիզներ ստեղծած են:

Ուրեմն յանուն ապագայ սերունդներուն՝ եթէ դադրինք փոխանցել լեզուն իբրեւ զէնք: Ներողութիւն, ուզեցի ըսել իբրեւ դաս, եթէ դադրինք փոխանցելէ սարսափը սխալներ գործելու, այսինքն ենթադրեալ կատարելին հասնելու անկարելիութեան մտահոգութենէն, եթէ յարգենք տարբերութիւնները... նոր սերունդներուն աչքին հորիզոններ կը բացուին: Կրնան փափաքիլ, ընտրել, ուզել մաս կազմել լեզուին: Վերագտնել իմաստը լեզուին, մենք ալ իրենց աչքերով կրկին կրնանք յայտնաբերել լեզուն, տեսնելով անոնց հաճոյքը լեզուով մտածելու, երեւակայելու, երազելու, յայտնաբերելու, ստեղծելու:

Լեզուն Սփիւռքով մէկ

Գործ կայ ընելիք: Բոլոր ճակատներուն վրայ գործ կայ ընելիք:

Լեզուն Սփիւռքով մէկ

USC-ի անձնակազմին եւ բոլորին վարձքը կատար:

Շնորհակալութիւն՝

(2) Տե՛ս. ամբողջական տարբերակը՝ <https://jabaven.com/lezun/>